ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«01» սեպտեմբերի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի աշակերտներ, ուսանողներ, կրթության, գիտության, մշակույթի և սպորտային ոլորտի ներկայացուցիչներ

Շնորհավորում եմ բոլորիդ Սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա, 2025-2026 ուստարվա մեկնարկի առթիվ:

Թող նոր ուսումնական տարին լինի ներշնչող, արդյունավետ և լի նոր նվաճումներով:

Սեպտեմբերի 1-ը սկիզն է նոր գիտելիքների, նոր փորձառությունների և ինքնաճանաչման ճանապարհի: Այս օրը խորհրդանշում է սեր դեպի ուսում, ձգտում դեպի զարգացում ու հավատ դեպի վաղվա օրը:

Դպրոցն ու կրթամշակութային հաստատություններն այն կարևոր ուսումնառության վայրերն են, որտեղ ձևավորվում են անհատներ, դրվում են ազգային ու մարդկային արժեհամակարգի հիմքերը:

Ուսումը երբեք չի ավարտվում, այն ուղեկցում է մեզ ողջ կյանքում՝ հարստացնելով միտքը, հոգին և աշխարհընկալումը:

Շնորհակալություն բոլոր ուսուցիչներին, ոլորտի նվիրյալներին՝ անմնացորդ աշխատանքի, հոգատարության և սերմանած լույսի համար:

Շնորհավոր Գիտելիքի օր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ